ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

17 ՀՈՒԼԻՍԻ 2019թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 5 անդամներ:

Բացակա էին՝ Վախթանգ Բաբայանը, Հարություն Համազասպյանը, Միշա Ղուկասյանը, Նորայր Մելքումյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Ռոբերտ Օհանյան, Սիրաք Ռաֆայելյան, Սերյոժա Ավալյան, Հակոբ Մարտիրոսյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Վազգեն Ադամյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արտակ Ստեփանյանը

Լսեցին
ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 16.07.2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 6 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով.

Հաստատել համայնքի ավագանու՝ 16.07.2019թ. թիվ 6 հերթական նիստի հետևյալ օրակարգը՝

1. ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՀՈՂԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿՈՒՅՈՂ Վ. ԱԴԱՄՅԱՆ/
2. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 1.6ՀԱ 1-Ի ԿԱՐԳԻ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ

ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ԶԵԿՈՒՑՈՂ Վ. ԱԴԱՄՅԱՆ/

3. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 3.0ՀԱ 4-ՐԴ ԿԱՐԳԻ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ԶԵԿՈՒՑՈՂ Վ. ԱԴԱՄՅԱՆ/
4. ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ԶԵԿՈՒՑՈՂ Վ. ԱԴԱՄՅԱՆ/
5. ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ԶԵԿՈՒՑՈՂ Վ. ԱԴԱՄՅԱՆ/
6. «ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ԶԵԿՈՒՑՈՂ Վ. ԱԴԱՄՅԱՆ/
7. «ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
/ԶԵԿՈՒՑՈՂ Վ. ԱԴԱՄՅԱՆ/
8. «ՃԱՄԲԱՐԱԿԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
/ԶԵԿՈՒՑՈՂ Վ. ԱԴԱՄՅԱՆ/
9. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ԶԵԿՈՒՑՈՂ Վ. ԱԴԱՄՅԱՆ/

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 48/

Լսեցին
ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՀՈՂԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաշվի առնելով Արծրուն Ջազյանի դիմումը այն մասին, որ նա 2014 թվականին Ճամբարակ համայնքի հետ կնքել է 1.0 հա հողի վարձակալական պայմանագիր, 25 տարի ժամկետով «Դուզ» հանդամասում: 2015-2019թթ. կուտակվել է 176141 դր. (մեկ հարյուր յոթանասունվեց հազար մեկ հարյուր քառասունմեկ դրամ) վարձակալության պարտք, որից 134144 դրամը (մեկ հարյուր երեսունչորս հազար մեկ հարյու քառասունչորս դրամ) մայր գումարն է, իսկ 41997 (քառասունմեկ հազար ինը հարյուր իննսունյոթ) դրամը՝ տույժ: Նա մուծել է մայր գումարը և սոցիալական խնդիրներից ելնելով՝ խնդրում է օրենքի սահմանում արտոնել վարձակալության մասով (քառասունմեկ հազար ինը հարյուր իննսունյոթ) դրամ տույժը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 49/

Լսեցին
ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 1.6 ՀԱ 1-Ի ԿԱՐԳԻ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 76-րդ հոդվաշի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով և 4-րդ մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնություն տալ Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքի 05-002-0231-0012 կադաստրային ծածկագրով գտնվող գյուղնշանակության 1.6 հա 1-ի կարգի արոտավայրը տրամադրել վարձակալական մրցույթով:
2. Հողամասի համար մեկնարկային գին սահմանել 9264 ՀՀ դրամ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 50/

Լսեցին
ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 3.0 ՀԱ 4-ՐԴ ԿԱՐԳԻ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 76-րդ հոդվաշի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով և 4-րդ մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնություն տալ Ճամբարակ համայնքի Այգուտ բնակավայրի 05-010-0264-0002 կադաստրային ծածկագրով գտնվող գյուղնշանակության 3.0 հա 4-րդ կարգի այլ հողատեսքը տրամադրել վարձակալական մրցույթով:
2. Հողամասի համար մեկնարկային գին սահմանել 8145 ՀՀ դրամ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 51/

Լսեցին
ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածով, 38-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ և 3-րդ մասի պահանջներով, ՀՀ «Հողի հարկի մասին» օրենքի 10-րդ հոդվածի (10-րդ հոդվածը լրաց. 05.04.00 ՀՕ-50, 30.04.08 ՀՕ-55-Ն, 08.12.11 ՀՕ-353-Ն, 27.02.12 ՀՕ-29-Ն, 21.03.12 ՀՕ-95-Ն) 11-րդ կետի պահնջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաշվի առնելով Մարտունի վարչական շրջանի բնակիչ Մարտին Դումանյանի դիմումը այն մասին, որ սեփականության իրավունքով իրեն պատկանող հողերի վրա 2008 թվականից մինչև 2018 թվականը կուտակվել է 137.700 (հարյուր երեսունյոթ հազար յոթ հարյուր) դրամ պարտք, որից 92.500 (իննսուներկու հազար հինգ հարյուր) դրամը մայր գումարն է , իսկ 45.200 -ը (քառասունհինգ հազար երկու հարյուր)՝տույժը: Նա մուծել է մայր գումարը և սոցիալապես անապահով վիճակից ելնելով՝ խնդրում է օրենքի սահմանում արտոնել տույժը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 52/

Լսեցին
ՃԱՄԲԱՐԱԿԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենի 18-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և 35-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնել համայնքի ղեկավարի կողմից ներկայացված «Ճամբարակի գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրենի թեկնածու Անուշ Խաչիկի Մարտիրոսյանի թեկնածությունը՝ նշանակելով կազմակերպության տնօրեն:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 56/

Լսեցին
ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և 35-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնել համայնքի ղեկավարի կողմից ներկայացված «Ճամբարակ համայնքի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրենի թեկնածու Արգիշտի Սողոմոնի Ջառահյանի թեկնածությունը՝ նշանակելով կազմակերպության տնօրեն:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 55/

Լսեցին
ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղոկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 35-րդ հոդվածով, 38-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ և 3-րդ մասի պահանջներով և ՀՀ «Գույքահարկի մասին» օրենքի՝01.01.2003թ.-ի 15 հոդվածի 3-րդ կետի պահնջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաշվի առնելով Ճամբարակ համայնքի բնակիչ Գոհար Հարությունյանի դիմումը այն մասին, որ իր անունով գրանցված է GAZ 24 մակնիշի ավտոմեքենա, որը տարիներ շարունակ գտնվում է անսարք վիճակում, չի շահագործվում, պետք է խոտանի: 2016 թվականից մինչև 03.07.2019 թվականը կուտակվել է 47.500 դր. (քառասունյոթ հազար հինգ հարյուր դրամ) գույքահարկի պարտք: Դիմողը գտնվում է սոցիալապես ծանր վիճակում և հնարավորություն չունի մուծելու գումարը: Խնդրում է օրենքի սահմանում արտոնություն սահմանել:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 53/

Լսեցին
ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԱԿ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, ՊՈԱԿ-ների մասին 9-րդ հոդվածով:

ՀԱՄԱՅՔՆԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հիմնադրել «Ճամբարակ համայնքի կոմունալ տնտեսության» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.
2. Հաստատել «Ճամբարակ համայնքի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի կանոնադրությունը /հավելված 1/
3. Սահմանել «Ճամբարակ համայնքի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի գործունեության առարկան տեսակները, նպատակները:
   3.1 Համայնքի աղբահանության, սանիտարական մաքրման և դրանց վճարների հաշվառման ու գանձման աշխատանքների կատարում:
   3.2 Արտաքին լուսավորության ցանցի սպասարկման, նորոգման, պահպանման և շահագործման աշխատանքների իրականացում:
   3.3 Բարեկարգման, նորոգման աշխատանքների իրականացում:
   3.4 Համայնքի բնակչության կենսապահովման խնդիրների լուծման նպատակով մատուցվող ծառայությունների իրականացում:
   3.5 Օրենքով սահմանված այլ տնտեսական գործունեության իրականացում:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 54/

Լսեցին
ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենիքի 18-րդ հոդվածի 1-ին, 4-րդ կետերով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ճամբարակ համայնքի 2018 թվականի հունիսի 25-ի N36 որոշման մեջ կատարել փոփոխություն:
2. Ճամբարակ համայնքի հնգամյա զարգացման ծրագրում ավելացնել «Ճամբարակ համայնքի երիտասարդական քաղաքականության» մասին հավելվածը /կցվում է/:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 57/

Ավագանու անդամներ

ԳԵՎՈՐԳ ԱԴԱՄՅԱՆ

ԹԱԹՈՒԼ ԴՈՒՄԱՆՅԱՆ

ՄԱԿԻՉ ԽՈՆԴԿԱՐՅԱՆ

ԶՈՒՐԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Արտակ Ստեփանյանը

_____